ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2008 թվականի մայիսի 26-ի թիվ ՀՕ-80-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում.

1. «ե.» պարբերությունից հանել «բացառությամբ կորպորատիվ ներդրումային ֆոնդերի կառավարիչների՝ ներդրումային ֆոնդերի կառավարման գործունեության մասով,» բառերը.
2. «ը.» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.
   «ը. ներդրումային ֆոնդի կառավարիչները և ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձինք, այդ թվում՝ ներդրումային ֆոնդերի կառավարման հետ կապված հարաբերությունների մասով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: